Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2024թ.

N

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ընդունված Երևանի ավագանու կանոնակարգի 71-րդ կետում կատարել փոփոխություններ ու լրացումներ և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«71. Ավագանու նիստում հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով՝

1) նիստին ներկայացած Ավագանու անդամների գրանցումը կատարվում է նիստը վարողի հայտարարությամբ՝ էլեկտրոնային համակարգով, տասը վայրկյանի ընթացքում, իսկ համակարգը չգործելու դեպքում՝ նիստը վարողի կողմից՝ Քաղաքապետարանի աշխատակազմի օժանդակությամբ.

2) նիստը վարողը հրապարակում է նիստին ներկա Ավագանու անդամների թվաքանակը: Եթե քվորում չկա, ապա նիստը վարողը հայտարարում է երեսուն րոպե ընդմիջում, որից հետո, եթե դարձյալ քվորում չի ապահովվում, ապա նիստը համարվում է չկայացած.

3) քվորումի առկայության դեպքում՝ նիստը վարողը հրապարակում է Ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը.

4) Օրակարգով հաստատված բոլորը հարցերը պարտադիր զեկուցվում և քվեարկվում են առանձին:

5) որպես զեկուցող ելույթ է ունենում տվյալ հարցի հեղինակը: Քաղաքապետի ներկայացրած հարցի քննարկման դեպքում՝ որպես զեկուցող կարող է հանդես գալ նաև նրա ներկայացուցիչը: Խմբակցության կամ Ավագանու ընտրությունների

առումով ընտրական իրավունք ունեցող անձանց ներկայացրած հարցի քննարկման դեպքում՝ որպես զեկուցող հանդես է գալիս նրանց մեկական ներկայացուցիչ.

6) զեկուցողին ելույթի համար տրվում է մինչև տասը րոպե ժամանակ.

7) զեկուցողի ելույթից հետո նիստը վարողը հայտարարում է քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ու պատասխան: Յուրաքանչյուր հարցի համար տրվում է մինչև երկու րոպե, իսկ պատասխանի համար՝ մինչև 3 րոպե: Ավագանու անդամը յուրաքանչյուր զեկուցողին հարց է տալիս մեկ անգամ: Հարց տալու համար հերթագրված, սակայն հարցը ուղղելու ժամանակ դահլիճից բացակայող Ավագանու անդամը զրկվում է հարցը տալու իրավունքից.

8) հարցեր տալու համար Ավագանու անդամները հերթագրվում են: Հերթագրումը իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ՝ էլեկտրոնային համակարգով՝ տասը վայրկյանի ընթացքում: Համակարգը չգործելու դեպքում հերթագրումն իրականացնում է նիստը վարողի կողմից՝ Քաղաքապետարանի աշխատակազմի օժանդակությամբ: Հարցերը տրվում են ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողի կողմից հարց տվողի անուն-ազգանվան հայտարարմամբ.

9) Պատասխանից հետո հարց տվողը և զեկուցողը իրավունք ունեն արձագանքել՝ մինչև մեկական րոպե տևողությամբ.

10) հարց ու պատասխանների ավարտից հետո նիստը վարողը հայտարարում է քննարկվող նախագծի վերաբերյալ մտքերի փոխանակություն: Ելույթների համար հերթագրումը կատարվում է հարցեր տալու հերթագրման կարգով: Յուրաքանչյուր ելույթի համար տրվում է մինչև հինգ րոպե: Խմբակցության ղեկավարը կարող է պահանջել խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթ՝ հայտարարելով ելույթ ունեցող խմբակցության անդամի անուն-ազգանունը.

11) մտքերի փոխանակության ավարտից հետո եզրափակիչ ելույթով կարող է հանդես գալ զեկուցողը, որի համար տրվում է մինչև հինգ րոպե.

12) նույն հարցի վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից նախաձեռնություններ ներկայացված լինելու դեպքում, եթե հեղինակները չեն առաջարկում հարցն օրակարգից հանել և մեկ նախագծի տեսքով ներկայացնել, ապա յուրաքանչյուր նախաձեռնություն քննարկվում և քվեարկվում է առանձին-առանձին.

13) եզրափակիչ ելույթից հետո նիստը վարողը քվեարկության է դնում քննարկված հարցը.

14) մինչև քվեարկության անցկացումը՝ Խմբակցության ղեկավարի պահանջի դեպքում, հայտարարվում է ընդմիջում մինչև տասնհինգ րոպե, ընդ որում՝ ընդմիջումը յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կարող է տրվել միայն մեկ անգամ, իսկ յուրաքանչյուր Խմբակցության ղեկավարը նույն նիստի ընթացքում կարող է ընդմիջում պահանջել ոչ ավելի քան երեք անգամ.

15) Ավագանու անդամները քվեարկում են անձամբ՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ.

16) բաց քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային համակարգով՝ տասը վայրկյանի ընթացքում, բացառությամբ Օրենքով կամ Կանոնակարգով նախատեսված դեպքերի: Համակարգը չգործելու դեպքում ձայները հաշվում է նիստը վարողը՝ Քաղաքապետարանի աշխատակազմի օժանդակությամբ: Նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները և դրանց համապատասխան հայտարարում՝ որոշումն ընդունվել է կամ չի ընդունվել: Ավագանու անդամների

անհատական բաց քվեարկությունների արդյունքները 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում.

17) գաղտնի քվեարկությունը կազմակերպում է նիստը վարողը՝ Քաղաքապետարանի աշխատակազմի օժանդակությամբ: Գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են Քաղաքապետարանի աշխատակազմի կողմից՝ Ավագանու անդամների ընդհանուր թվից 15 հատ ավել քանակով.

18) քվեաթերթիկներում նշվում է քվեարկվող հարցը կամ այբբենական կարգով ընդգրկվում են առաջադրված և ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն-ազգանունները: Քվեաթերթիկում մեկ հարցի կամ մեկ թեկնածուի առկայության դեպքում պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը.

19) գաղտնի քվեարկության քվեաթերթիկը Ավագանու անդամին է հանձնում ցուցակում վերջինիս ստորագրելուց հետո.

20) Ավագանու անդամը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի քվեարկության խցիկում՝ Կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված կարգի պահանջներին համապատասխան, այնքանով, որքանով դրանք չեն հակասում Օրենքով գաղտնի քվեարկությանը ներկայացվող պահանջներին.

21) քվեարկության ավարտից հետո՝ երեսուն րոպեի ընթացքում, նիստը վարողը՝ Քաղաքապետարանի աշխատակազմի օժանդակությամբ բացում է գաղտնի քվեարկության տուփը և հաշվում ձայները: Անվավեր են համարվում Կանոնակարգի 5-րդ գլխով նախատեսված քվեաթերթիկները.

22) գաղտնի քվեարկության արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում և հրապարակում է նիստը վարողը:»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդվող օրվանից:

**Երևան քաղաքի ավագանու**
**«Մայր Հայաստան» խմբակցության անդամ՝**

**Մանուկ Սուքիասյան**

**Աննա Ավետիսյան**

## ՏԵՂԵԿԱՆՔ -ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է հրապարակային դարձնել Երևան քաղաքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) կողմից քննարկվող բոլոր հարցերը և բացառել որևէ հարցի չզեկուցման տարբերակը: Սույնով նաև առաջարկվում է Երևանի ավագանու որոշման նախագծերը քննարկվեն և քվեարկվեն առանձին: Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 1-ին հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը ի թիվս այլնի, նաև ժողովրդավարական պետություն է: Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՏԻՄ օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի քաղաքի ավագանու նիստերը հրապարակային են և ավագանու հրապարակային նիստերը առցանց ուղիղ հեռարձակվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում: Սակայն հրապարակայնությունը չի դրսևորվում միայն Երևան քաղաքի ավագանու նիստը հեռարձակելով և ընթացքում կողմ, դեմ և ձեռնպահ ձայների հաշվարկի արդյունքը ցուցադրելով, որը հաճախ չի ցուցադրվում: Երևան քաղաքի ավագանին, ելնելով Երևան համայնքի բնակչության ներկայացուցչական մարմին լինելու հանգամանքից և նիստերի հրապարակայնության կանոնից, անհրաժեշտ է, որ ընդունի վերը նշված նախագծով առաջակվող որոշումը, որով նախատեսվում է Երևանի համացանցային պաշտոնական կայքում յուրաքանչյուր որոշման մասով բնակչությանը հասանելի դարձնի այն տեղեկատվությանը, թե վերջիններիս կողմից ուղղակիորեն ընտրված Ավագանու անդամները քվեարկության փուլում, անհատական մակարդակում ինչ դիրքորոշում են արտահայտում և ինչպես են քվեարկում Երևանի հետ կապված որոշումներին: Սրանով հնարավորություն կստեղծվի նաև խուսափել տարընթերցումներից և հստակ ու մատչելի կլինի քվեարկության հետ կապված տեղեկատվությունը: Նման փորձ արդեն առկա է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, որտեղ տարիներ շարունակ հրապարակվում են բոլոր ընդունված որոշումների հետ կապված անհատական բաց քվեարկության արդյուքները, ինչը Հայաստանի Հանրապետության բնակիչների համար առավել պարզ և մատչելի է դարձնում իր կողմից ձևավորված ներկայացուցչական մարմնի անդամների անհատական դիրքորոշումները քվեարկության փուլում: Հաջորդ առաջարկը վերաբերում է զեկուցվող և չզեկուցվող հարցերին, որով Երևանի ավագանու կանոնակարգով կբացառվեն չզեկուցվող հարցերի գոյությունը Երևան քաղաքի ավագանու նիստերի օրակարգից՝ անկախ նախագծի բնույթից, կարևորությունից ծավալից և այլ հատկանիշներից: Երևանի ավագանու նիստերը պետք է ամբողջապես հասանելի լինեն և նիստին հետևող քաղաքացին պետք է հստակ պատկերացում ունենա և տեղյակ լինի, թե

ինչ նախագծեր են քննարկվում, որը չզեկուցվող հարցերի առկայության դեպքում սահմանափակվում է: Ըստ էության, սրանով սահմանափակվում են նաև Ավագանու անդամների իրավունքները՝ կապված հարցեր տալու, որոշ չպարզաբանված հանգամանքներ ճշգրտելու, առաջարկներ ներկայացնելու և այլնի մասով: Ուստի, այս մասով ևս առաջակվող նախագիծը դրական փոփոխության կհանգեցնի և ավագանու աշխատանքները կդառնան համեմատաբար ավելի արդյունավետ: Ներկայացվող նախագծով հաջորդ առաջարկը շաղկապված է վերոգրյալի հետ, որով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանու նիստի օրակարգային հարցերը քննարկել և քվեարկել առանձին: Սա հնարավորություն է տալիս յուրաքանչյուր դեպքում Ավագանու անդամի դիրքորոշման արտահայտման հնարավորության և ազատության չսահմանափակման: Սա կբացառի նաև կախումը փաթեթում առկա այլ նախագծերից, քանի որ հնարավոր է փաթեթում ներառվեն հարցեր, որի մի մասին Ավագանու անդամը կողմ է, բայց մյուս հարցերի մասով ունի վերապահումներ: Սույն նախագիծը հնարավորություն կտա և՛ քաղաքացիներին առավել հասանելի դարձնել Երևանի ավագանու ու նրա անդամների գործունեությանը, ինչպես նաև սպասվելիք որոշումների բովանդակությանը, և՛ առավել ձևով կերշխավորի Ավագանու անդամի անկախ և առանց սահմանափակումների գործունեությանը:

Ուստի, ելնելով վերը նշվածից, անհրաժեշտ է Ավագանու անդամների աշխատանքի արդյունավետության բարձրացման և Ավագանու նիստերի և գործունեության հրապարակայնությունը ամբողջապես ապահովելու համար ընդունել սույնով առաջարկվող նախագիծը:

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**
Մանուկ Սուքիասյան
Աննա Ավետիսյան